ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՄԱՅՐԵՆԻ

(առարկա)

ԹԵՄԱ - Զննականությունը որպես սկզբունք,որպես մեթոդների խումբ

Կազմեց՝ __Ռոզա Ռեդիկի Բարխուդարյան

(անուն, ազգանուն, հայրանուն)

_ <<__Մեղրու թիվ 1 միջն. դպրոց >> ՊՈԱԿ

(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝_Լուսինե Բալայան

<<Կապանի N2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2022

Բովանդակություն

Ներածություն……

Գլուխ1

Զննականությունը որպես սկզբունք…….

Ուսուցման զննական մեթոդները……..

Ուսուցման գրաճանաչության շրջան……..

Գրաճանաչության նախայբբենական շրջանում իրականացվող աշխատանքի բովանդակությունն ու զննական պարագաների կիրառումը……..

Գրաճանաչության այբբենական շրջանում իրականացվող աշխատանքի բովանդակությունն ու զննական պարագաների կիրառումը……

Գրաճանաչության հետայբբենական շրջանում իրականացվող աշխատանքի բովանդակությունն ու զննական պարագաների կիրառումը……

Գլուխ 2

Հետազոտական մաս…….

Եզրակացություն…….

Օգտագործված գրականության ցանկ…….

Ներածություն

Հայտնի է, որ եթե գիտելիքները չեն խարխլվում տեսողական հիմքի վրա, դրանք կամ արագ մոռացվում են, կամ դառնում են չգիտակցված, չկիրառվող, միայն վերատադրվող նյութ: Այդ իսկ պատճառով մայրենիի դասերի ժամանակ հարկավոր է ակտիվացնել աշակերտների բոլոր զգայարանները՝ օգտագործելով առարկաներ, դրանց նկարները, գծագրեր, աղյուսակներ, որոնք կբարձրացնեն դասի արդյունավետությունը և ուսումնասիրվող նյութի նկատմամբ երեխաների հետաքրքրությունը: Չպետք է մոռանալ, որ «Մտավոր կրթությունը բխում է մեր արտաքին զգայարանների վրա ներգործող ու դրանք կենդանացնող առարկաների զգայական ընկալումից»:

Այս աշխատանքը բաղկացած է երկու մասից՝ տեսական և հետազոտական հատվածներից: Տեսական հատվածում ներկայացվում է զննականությունը որպես սկզբունք, որպես մեթոդների խումբ:Ներառված են թեմային առնչվող նյութեր, գիտական սահմանումներ, իսկ հետազոտական հատվածում՝ դասապլանների օրինակներ են: Դրանք իմ ակտիվ հետազոտության շրջանակներում կազմած դասապլաններն են: Դասի պլաններից ընտրել եմ նրանք, որոնք դարձան արդյունավետ դասի գրավական. տվյալ դասերը հասան իրենց նպատակին:

Հետազոտական հատվածից զատ աշխատանքին է կցված հավելվածը, որտեղ հավելյալ նյութերն են թեմային առնչվող, դիտազննական պարագաներն են , որոնք օգտագործել եմ :

Հետազոտության արդիականությունը. տարրական դպրոցում պիտի կարևորել ոչ թե գիտելիքների մեծ ծավալի հաղորդումը , այլ դրանց՝ երեխաների կարիքներին համապատասխանությունը, նրանց կողմից յուրացման ձևերը, դրանց գործածման արդյունավետությունը, հետագա ուսումնական գործունեության ընթացքում դրանց անհրաժեշտությունը և երեխային բարձրակարգ մտածողության ձևավորման համար պիտանիությունը:

Հետազոտության նպատակը զննականությամբ բարձրացնել սովորողների հետաքրքրությունները գիտական գիտելիքների յուրացման նկատմամբ:Ուսուցման արդյունավետության համար կրիառել ուսուցման զննական մեթոդները՝ իլուստրացիա և դեմոնստրացիա:

Գլուխ 1

Զննականությունը որպես ուսուցման սկզբունք

Ուսուցման երկարամյա փորձը և հատուկ հոգեբանական-մանկավարժական հետազոտությունները ցույց են տվել, որ ուսուցման արդյունավետությունը կախված է մարդու զգայարանները ըմբռման գործընթացին ներգրավելու աստիճանից: Ինչքան բազմազան են ուսումնական նյութի զգայական ընկալումները, այնքան ավելի կայուն է այն յուրացվում: Այդ օրինաչափությունն իր արտահայտությունն է ստացել զննականության դիդակտիկական սկզբունքում, որի հիմնավորման մեջ էական ավանդ են ունեցել Յա. Ա. Կոմենսկին, Ի. Պեստալոցին, Կ.Դ. Ուշինսկին, Լ. Վ . Զանկովը: [1; էջ 220] Յան Ամոս Կոմենսկին պահանջում էր ամեն կերպ ուսուցմանը մասնակից դարձնել երեխայի բոլոր զգայարանները: Այդ պահանջը նա անվանեց <<Դիդակտիայի ոսկե կանոն>>: Հետագայում ուսուցման զննականության էությունը հիմնավորված մեկնաբանեց Հ. Պեստալոցին: Նրան է պատկանում այն գաղափարը, ըստ որի հասկացությունները մտավորապես ձևավորելուն պետք է դրանք զուգակցել զննականությանը: Ավելի ուշ Ուշինսկին բացահայտեց զննական զգայությունների նշանակությունը:

Այսպիսով, այն ուսուցումն է ավելի արդյունավետ, որը մշտապես զուգակցվում է զննականությանը: Բայց կա կարևոր հանգամանք. Այս սկզբունքը ուսուցչից պահանջում է ուսուցման ընթացքում, ելնելով նյութի բովանդակությունից, սովորողների ուսումնական և տարիքային հնարավորություններից, ճիշտ ընտրել զննական միջոցները, ուսուցման մեթոդները, որպեսզի հնարավոր լինի սովորողների բոլոր զգայարանները մասնակից դարձնել ուսումնասիրվող նյութի ընկալման, հասկացման և իմաստավորման գործընթացներին և այդ ուղիով ապահովել գիտելիքների, հմտությունների ու կարողությունների խոր յուրացումը:

Զննականությունը բարձրացնում է սովորողների հետաքրքրությունները գիտական գիտելիքների յուրացման նկատմամբ, մատչելի է դարձնում հասկացության իմաստի

ըմբռնումը, նպաստում գիտելիքների յուրացմանը, խորացնում հասկացումը: [2; էջ 153]

Ուսուցման զննական մեթոդները

Ուսուցման զննական մեթոդները պայմանականորեն կարելի է բաժանել երկու մեծ խմբերի՝ իլուստրացիայի և դեմոնստրացիայի մեթոդների: Զննական են համարվում այն եթոդները, որոնց միջոցով սովորողների կողմից ուսումնական նյութի յուրացումը կախում ունի դիտազննական պարագաներից և ուսուցման միջոցներից: Իլուստրացիայի մեթոդը խնդիր է դնում ուսուցման գործընթացում ուսումնական նյութը սաներին հաղորդելիս կիրառել դիտազննական պարագաներ՝ պլակատներ, նկարներ, գծագրեր: Ուսուցման արդյունավետությունն ավելի բարձր է լինում այն դեպքում, երբ պատմելը, զրույցը, բացատրությունը զուգակցվում ենիլուստրացիային, այսինքն՝ ցուցադրմանը:

Դեմոնստրացի մեթոդի էությունը նույնպես ցուցադրումն է:Դեմոնստրացիայի դեպքում ցուցադրմանն ուղեկցվում է շարժումը: Զննական միջոցների կիրառումը պահանջում է պահպանել մի շարք մանկավարժական պայմաններ՝

ա) օգտագործվող զննականությունը պետք է համապատասխանի սովորողների տարիքային հնարավորություններին,

բ) զննականությունը պետք է օգտագործել դասի համապատասխան փուլերում,

գ) երևույթը, գործընթացը, իրադարձությունն այնպես պետք է ցուցադրել, որպեսզի դրանք տեսանելի լինեն բոլոր աշակերտների համար,

դ) աշակերտներից պահանջել զննական պարագայի մեջ գտնել որոնելի ինֆորմացիան,

ե) ցուցադրման համար, նախօրոք, ուսումնական նյութում պետք է առանձնացնել գլխավորը, էականը և հայտնել աշակերտներին՝ ցուցադրման ժամանակ նրանց ուշադրությունը դրանց վրա բևեռելու համար: [2 ; էջ 165]

Գրաճանաչության մեթոդիկա

Որպես անձի զարգացման միջոց: Այսինքն՝ տարրական դպրոցում պիտի կարևորել ոչ թե գիտելիքների մեծ ծավալի հաղորդումը , այլ դրանց՝ երեխաների կարիքներին համապատասխանությունը, նրանց կողմից յուրացման ձևերը, դրանց գործածման արդյունավետությունը, հետագա ուսումնական գործունեության ընթացքում դրանց անհրաժեշտությունը և երեխային բարձրակարգ մտածողության ձևավորման համար պիտանիությունը: Այս խնդիրների իրականացումը պահանջում է, որ ուսուցման բովանդակությունը, մեթոդներն ու միջոցները համապատսխանացվեն կրտսեր դպրոցականների՝ ստեղծագործական, մտավոր գործունեության ծավալելու կարողությունների ձևավորման նպատակներին: Մայրենիի տարրական դաընթացի խնդիրը կրտսեր դպրոցականների լեզվամտածողության և տրամաբանության, մտածելակերպի, ուսումնառության և համագործակցային տարրական կարողությունների ձևավորումն է: [3 ; էջ 6] Գրաճանաչության կազմակերպման գործընթացի բովանդակությանն ու մեթոդներին ներկայացվում են տարիքային առանձնահատկություններով, կարիքներով և հնարավորություններով պայմանավորված պահանջներ: Գրաճանաչությունը կազմակերպվում է երեք շրջանով.

ա) նախաայբենական շրջան,

բ) այբբենական կամ գրուսուցման շրջան,

գ) հետայբբենական շրջան: [3 ; էջ 38]

Գրաճանաչության նախաայբբենական շրջան

Գրաճանաչության նախաայբբենական կամ նախապատրաստական շրջանի հիմնական խնդիրներն են՝ կազմակերպչական և ուսումնական: Կազմակերպչական խնդիրների մեջ են մտնում երեխաների ծանոթացումը ուսումնական գործունեությանը, միմյանց հետ, հաստատության կարգ ու կանոնին, նրանց

իրավունքներին և պարտականություններին, հաղորդակցման բարեկիրթ նորմերին: Ուսումնական խնդիրները ուսումնական գործունեությանը երեխաների պատրաստականության մակարդակի բացահայտումն է, որն իրականացվում է մինչ ուսումնական տարվա սկսելը: Գոյություն ունեն այս շրջանի վերջում ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների սահմաններ, որտեղ երեխները պետք է գաղափար ունենա պատմության , նախադասության, բառի, վանկի, հնչյունի մասին, ունենա որոշակի բառապաշար, ձեռքերը նախապատրաստած լինեն գրելուն, կարողանան գրել հայերենի պարզ մասնիկները, նաև պետք է կարողանան պատմել տեսածի, ըստ հիշողության , անգիր իմանան և արտահայտիչ արտասանեն սովորած բանաստեղծությունները և այլն:[3 ; էջ 40]

Գրաճանաչության նախաայբբենական շրջանում իրականացվող աշխատանքի բովանդակությունն ու զննական պարագաների կիրառումը

Այս շրջանում աշակերտները յուրացնում են գրաճանաճության ուսուցման արդյունավետության համար կարևոր լեզվական մի շարք հասկացություններ՝ գործնականորեն պատրաստվելով կարդալու և գրելու գործընթացներին:

- Խոսք:

Դիտազննական պարագաներ՝ մեծադիր թեմատիկ նկարեր, այբբենարանի նկարներ, հատուկ պաստառներ: Այս նկարների շուրջ ուսուցչի հարցերի օգնությամբ երեխաները կազմում են մտքով իրար հետ կպված մի քանի նախադասություն, որոնց ամբողջությունը հետագայում անվանում են պատմություն:Եթե այս կարողությունները որոշակի մակարդակով ձևավորված են , կարելի է անցնել հաջորդ քայլին ՝ գաղափար տալ գծապատկերի մասին:

- Գաղափար նախադասության մասին:

Դիտազննական պարագաներ՝ գծապատկեր, ցուցարական պաստառ:

Թեմատիկ նկարների շուրջ պատմություն հյուսելով, ազատ, ինքնուրույն խոսք կառուցելով պիտի մշակել ուսուցչի օգնությամբ նախադասությունները պատմությունից առանձնացնելու ունակություն:

- Գաղափար բառի մասին, վանկի: Դիտազննական պարագաներ՝ նկար-պատմություն, նկար-նախադասություն, նկար-բառ:
- Գաղափար հնչյունի մասին: Աշխատանքը կատարվում է գծապատկերի միջոցով, գրատախտակին գծելով կամ նախապես ցուցադրելով միավանկ բառերի գծապատկերները,որոնք թեև միավանկ են բայց ունեն տարբեր քանակի հնչյուններ:

Նախաայբբենական շրջանում շահեկան է բառ հասկացությունը կապել որոշակի իմաստի, զգայական ընկալման հետ. Այդ նպատակով վերլուծության համար ընտրված բառերը պետք է առարկայական լինեն: Բառի շուրջ աշխատանքի ժամանակ կարևոր է, որ աշակերտները հասկանան առարկայի և բառի տարբերությունները, որոնք անվանում է այդ առարկան: Այդ տարբերություններն առավել ակնառու կդառնան, եթե ցուցադրվի առարկան, և աշակերտին հարցնեն, թե ինչ կարելի է անել նրանով: Օրինակ՝ գրիչով կարելի է գրել, գրիչը կարելի է դնել սեղանին, վերցնել, նետել և այլն: Իսկ այ գրիչ բառով այդ բոլոր գ

Գործողությունները կատարել հնարավոր չէ: Գրիչ բառը միայն կարելի է արտասանել, լսել, գրել, կարդալ:Այս և նման վարժությունների միջոցով կարելի է ցույց տալ բառի և այդ բառը ներկայացնող առարկայի տարբերությունը: [3 ; էջ 44]

Գրաճանաչողության նախայբեննական շրջանում ուսուցման ընթացքում բազմապիսի զննական պարագաներ են օգտագործվում. Դրանց մի մասը նախատեսված է ուսուցման դժվարությունները հաղթահարելու համար, մյուս մասը՝ յուրացումն ամրապնդելու:

Գրաճանաչության այբբենականշրջանում իրականացվող աշխատանքի բովանդակությունն զննական պարագաների կիրառումը

Այս շրջանում երեխան ճանաչում է բոլոր հնչյուններն ու դրանց տառերը, սովորում է դրանք ճիշտ արտաբերել,գրել ու կարդալ՝ ինչպես առանձին ու անկախ վերցրած, այնպես էլ մյուս հնչյունների ու տառերի հետունեցած կապակցության մեջ: Տառաճանաչության գործընթացի առաջին և կարևոր խնդիրը տվյալ տառի հնչյունի ընկալումն է: Այսինքն՝ ուսուցումը պիտի հնչյունից գնա դեպի տառը:Այս խնդիրների հաջորդական իրականացման համար նախ պատմություն է հյուսվում այբբենարանի յուրաքանչյուր նոր տառի համար նախատեսված էջի թեմատիկ նկարի շուրջ: Նոր տառի ուսուցումը ուսուցիչը սկսում է դասարանին ցույց տալով տվյալ հնչյունի տպագիր տառերը (փոքրատառ և մեծատառ):Այնուհետև տառակապակցություննե են կազմում և ընթերցում: Տառապատկերի ճանաչումից հետո անմիջապես պիտի աշխատել *տառադարանով*՝ նորածանոթ տառով և անցած տառերով կազմելով և կարդալով տառակապակցություններ:

*Աշխատանք մեծադիր տառադարանով:*Տառադարանի բոլոր տառերը նախապես պիտի ծածկված լինեն փոքրիկ թղթերով:Ուսուցչուհին հանդիսավոր կերպով բացում է տառդարանի նորածանոթ տառը: Հերթով աշակերտներից յուրաքանչյուրը տառադարանից հանում են նոր սովորած տառը և կազմում տառակապակցություններ արդեն ծանոթ ձայնավորներով:

*Աշխատանք անհատական տառադարանով:*Ուսուցչի հրահանգով երեխաներն իրենց տառադարանների գրիպանիկներից հանում են տվյալ տառը և ցուցիչ տալիս: Ուսուցիչը ստուգում է առաջադրանքի կատարման ճշտությունը: Այնուհետև այդ տառով կազմումմ են բառեր:

Տառապատկերի ըմբռնումանն ու մտապահմանը նպաստող վարժություն:

Վարժություն 1

Երեխաները բաժանվում են խմբերի: Յուրաքանչյուր խումբ ստանում է տարբեր տառերի մեծածավալ մասնիկներ: Նրանցից յուրաքանչյուրին պիտի բաժին ընկնի մեկ մասնիկ: Հաղթում է այն խումբը, րն առաջինն է ամբողջացնում տառը: Այս վարժությունը կարելի է կատարել նաև անհատաբար: Այդ դեպքում յուրաքանչյուր աշակերտ պետք է ստանա բացիկի պես ծալված մի գունավոր թուղթ, տառի

մասնիկներն ու այդ տառով սկսվող անուն ունեցող որևէ առարկայի նկար: Բացիկի ներսում կփակցնի տառամասնիկները, իսկ երեսին՝ առարկայի նկարը: [3: էջ 58]

Աշխատանք այբբենարանով:

Այբբենարանում տրված նկարների, առանձին բառերի, կապակցությունների, նախադասությունների ու կապակցված նյութերի, դրանց շուրջ անցկացվող զրույցների, բացատրությունների զննական նյութերի և այլ միջոցներով երեխաներին տարրական տեղեկությունոններ են հաղորդում շրջապատող աշխարհի, մարդկանց աշխատանքի և այլ հարցերի վերաբերյալ::Այդ բնույթի նյութերը հիմնականում վերաբերում են երեխայի շրջապատին՝ մարդկանց, կենդանիներին, բույսերին, քաղաքի ու գյուղի կյանքին, ընտանիքին, դպրոցին: Այս բոլորը էլ երեխաներին խորապես ծանոթ, հարազատ, ծանոթ և հետաքրքրող թեմաներ են: Այբբենարանը հնարավորություն է տալիս աշակերտների մեջ ձևավորել անձնային և մարդասիրական որակներ:

Գրաճանաչության ուսուցման շրջանը , խիստ կարճատև մի շրջան է, սակայն այն բացառիկ կարևոր նշանակություն ունի երեխաների դաստիարակության, կրթության, որպես աշակերտներ, մարդ-քաղաքացիներ ձևավորելու գործում:[4, էջ 109]

Տառերի գրուսուցման դասի հիմնական մեթոդական շղթան

1. Կազմակերպման – բացատրական աշխատանք
2. Բառի հնչյունային վերլուծություն. Ուսուցանվող նոր հնչունի առանձնացում բառից.
3. Ծանոթություն նորածանոթ հնչյունի ձեռագիր տառերին, համեմատում տպագր տառերի հետ
4. Նորածանոթ տառերի մասնիկների վերլուծություն
5. Նորածանոթ տառի համեմատում ծանոթ տառերի հետ
6. Տառի պատկերում գրատախտակին՝ զուահեռ բացատրությունով և հաշվով:
7. Տառապատկերի ստացում օդում
8. Տառապատկերի ստացում թելերով, լարերով
9. Տառի գրուսուցում գրատախտակին

10. Մատները գրելուն նախապատրաստող վարժություններ:

11. Աշխատանք տետրում.

- Տառի գրուսուցում
- Բառի գրուսուցում
- Տառակապակցությունների գրուսուցում
- Բնագրի գրուսուցում

12 . Ֆիզկուլտ դադար: [3, էջ 79]

Գրաճանաչության այս փուլում գործադրելի են հետևյալ *զննական պարագաները,*որոնցից ամեն մեկն ունի իր ուրույն խնդիրներն ու նպատակները և պետք է տեղին ու ճիշտ օգտագործվի, որպեսզի պահանջված սրդյունքը տա:

Այբուբենը նկարներով. Զննական նյութերի այս համալիրը ներկայացնում է այբուբենի յուրաքանչյուր տառին համապատասխանող հնչյունով սկսվող բառ-առարկայի պատկերը, որը ցուցադրվում է հնչյունային վերլուծություն կատարելուց առաջ և այդ վերլուծության համար հիմնական մեկնաբառ դառնում: Վերցված են լինում այնպիսի առարկաների նկարներ, որոնց մեջ տվյալ հնչյունը լսում է բառասկզբում, բառամիջում և բառավերջում:

Տպագիր և ձեռագիր այբուբեն:Ինչպես տպագիր, այնպես էլ ձեռագիր այբուբենը գրաճանաչության այբեբենական փուլում անհրաժեշտություն են և դասարանում մեծադիր պլակատի ձևով պետք է մշտապես փակցված լինեն:

Տառադարան:Հայերենի տառերի քանակին համապատասխան գրպանիկներով փոքրադիր ու մեծադիր այբուբեն է:

Թեմատիկ նկարներ: Այսպիսի մեծադիր նկարներն օգտագործվում են ինչպես նախապատրաստական զրույցի, այնպես էլ խոսքի զարգացման վարժությունների համար:[4, էջ 121]

Գրաճանաչության հեայբբենական շրջանում իրականացվող աշխատանքի բովանդակությունն ու կիրառվող զննական պարագաները

Գրաճանաչության ուսուցման երրորդ՝ հետայբբենական շրջանի կրթադաստիարակչական խնդիրները հստակորեն տրված են մայրենիի առաջին դասարանի ծրագրում. Դրանք հիմնականում այդպիսիք են.

Ա. Ամրակայել և զարգացնել այբբենական շրջանում երեխաների ձեռք բերած հասկանալով և վերլուծելով կարդալու կարողությունները

Բ. Կատարելագործել վայելչագրական, այնպես էլ ուղղագրական կանոններին համապատասպխան երեխաների գրելու կարողությունները:

Գ. Հարստացնել աշակերտների բառապաշարը, զարգացնել բանավոր կապակցված խոսքը:

Դ. Զարգացնել երեխաների բարոյակամային որակները

Ե. նախապատրաստել բացատրական ընթերցանության մեթոդով իրականացվող մայրենիի դասերին

Զ. Անգիր արտասանել այբուբենը՝ մեսրոպյան անվանումներով:[3, էջ 82]

Կարդալու տարրական կարողության ձևավորում: Ճիշտ կարդալ նշանակում՝է կարդալ այնպես, ինչպես գրված է՝ առանց բառի հնչյունային կազմի աղավաղման՝ պահպանելով գրական հայերենի շեշտդրությունը:

Սահուն կարդալու մակարդակին ներկայացվքող պահանջներն են.

- Կարդալ այնպիսի տեմպով, ինչպես խոսում են
- Կարդալիս պահպանել բառերի միջև գոյություն ունեցող տրամաբանական կապերը
- Թույլ չտալ անհարկի դադարներ
- Կարդալ ամբողջական բառերով:

Հասկանալով կամ գիտակցորեն կարդալու մակարդակին ներկայացվող պահանջներն են.

- Հասկանալ կարդացած բնագրի բովանդակությունը
- Զայնային ելևէջներով, անհրաժեշտ շեշտադրությամբ:
- Որոշել ընթերցածի հիմնական միտքը, գաղափարը:

Արտահայտիչ կարդալու մակարդակին ներկայացվող պահանջներն են՝

- Արտահայտչականության տարբեր հնարների միջոցով ներկայացնել ստեղծագործության զգացմունքային և իմաստային կողմերը:

Գրելու կարողության զարգացում:Վայելչագրական կանոններին համապատասխան գրելու կարողության ձևավորման ուղղությամբ աշխատանքները ենս սկսվում են նախաայյբբենական շրջանում և շարունակվում ե բուն գրաճանաչության շրջանում:Այս շրջանում երեխաները հիմնականում կարողանում են ազատ կողմնորոշվել տետրում և ընդօրինակելով կամ թելադրությամբ՝ գրել տառեր, բառեր, նախադասություններ, փոքրիկ բնագրեր: Հետայբբենական շրջանում գրելու կարևոր մակարդակ է, որն ապահովում է արագ գրելու կարողության ձևավորումը:

Բառապաշարի հարստացում, խոսքի զարգացում: Աշխատանքները իրականացնում են հետևյալ նպատակներով՝

- Աշակերտների բառապաշարի մաքրում, հղկում, հարսացում
- Անձ, իր առարկա, գործողություն, առարկայի հատկանիշ ցույց տվող բառեր տարբերակում
- Բառի նկատմամբ հետաքրքրության ձևավորում
- Կապակցված խոսք կառուցելու կարողության ձևավորում:

Նախապատրաստում բացատրական ընթերցանության: Այս շրջանում աստիճանաբար դասի գործընթաց են ներմուծվում բացատրական ընթերցանության բոլոր բաղադրիչները (զրույց, բնագրի ընթերցում, բառային աշխատանք, աշխատանք բնագրի շուրջ, կարդացածի վերարտադրում կամ պատմում, ամփոփում): Կատարելագործվում է աշակերտների կարդալու տեխնիկան, զարգանում է կարդացած ստեղծագործությունը վերլուծելու , հերոսների արարքների պատճառահետևանքային կպերը գտնելու կարողությունները: [3, էջ 87]

Հետայբեննական շրջանում հիմնականում օգտագործվում է այնպիսի դիտազննական պարագաներ, որոնք նպաստում են աշակերտների կապակցված խոսքի զարգացմանը:

Գլուխ 2

Հետազոտական մաս

Հետազոտությունը անցկացրել եմ առաջին դասարանում: Այդ ընթացքում վարել եմ դասեր, որտեղ կիրառել եմ զննական բոլոր մեթոդները: Դիտազննական պարագաները պատրաստել եմ ինքս, սակայն որոշները պատրաստվել է աշակերտների կողմից: Ստորև ներկայացնում եմ դասի պլաններ գրաճանաչության երեք շրջանների համար:

Նախաայբբենական շրջանի դասապլան

Ամսաթիվ՝ 04.10.2021:

Դասարան՝ 1-ին:

Թեմա՝ «Բառ, հնչյուն, բառի հնչյունային կազմը»

Նպատակ՝հնչյունային լսողության և ամբողջական բառապատկերները տեսնելու կարողության զարգացում:

Դասի խնդիրները՝

- Ամրակայել բառերը հնչույթային վերլուծության ենթարկելո ւկարողությունը:
- Զարգացնել մասնիկներ գրելու, պատկերներ եզրագծելու ևնրբագծելու կարողությունները:
- Զարգացնել արագ կողմնորոշվելու, խմբում աշխատելու կարողությունները:

Կիրառվող մեթոդներն ու տեխնոլոգիաները՝զննական մեթոդ՝իլուստրացիա, գործնական մեթոդ՝ինքնուրույն աշխատանքի մեթոդ, զույգերով աշխատանք, խմբային աշխատանք, խաղային և համագործակցային տեխնոլոգիա:

Օգտագործվ ող դիտազննական պարագաներ՝նկար-բառեր, մեծադիր նկարներ, գրատետրեր, գունավոր և գրաֆիկական մատիտներ, այբբենարան:

Դասի ընթացքը՝

Խթանման փուլ՝

Կազմակերպական պահ:

Ուսումնական խաղ՝«Ո՞վ ավելի արագ կասի.. »-նախապատրաստել սակավահնչյուն, ոչ բարդ բառեր և փոքր գնդակ:

Խաղի նպատակը: Բառի մեջ հնչյունները լսելու, տրված հնչյունով նոր բառկազմելու կարողությունների զարգացում, բառապաշարի հարստացում: Խաղի ընթացքը: Հրահանգ: - Գնդակը հերթով նետելով յուրաքանչյուրիդ՝ ասելու եմ մ եկ բառ:

Բռնելով գնդակը՝ պետք է հնարավորինս արագ ասեք տրված բառի բոլոր հնչյուններով սկսվող նոր բառեր: Ով սխալ վեց կամ կանգառավ 5 վայրկյանից ավելի, նա դուրս կգախաղից:

Իմաստի ընկալման փուլ՝

Կատարել զույգերով աշխատանք:

Յուրաքանչյուր զույգին բաժանել համապատասխան առաջաջադրանքներ, որոնք ավարտելուց հետո պետք է փոխանցեն հաջորդ զույգին:

1-ին զույգ. Կազմում է տրված նկար – բառերի գծապատկերները:

2-րդ զույգ. Աշխատանքային տետրից կատարել համապատասխան առաջադրանք

3-րդ զույգ . քարտային աշխատանք

Կշռադատման փուլ՝

Կատարել խմբային աշխատանք

«Ով ավելի արագ, ով ավելի շատ…»:

Անվանել այբբենարանի համապատասխան էջում տրված նկար - բառերը, բաժանել վանկերի և որոշել հնչյունների քանակը:

Դիտարկում: Նախայբբենական շրջանում ,ինչպես նշված է աշխատանքի տեսական հատվածում, աշակերտներ ը պետք է գիտակցեն բառը՝որպես խոսքային ինքնուրույն

միավոր և ձեռք բերեն անհրաժեշտ բառամթերք, այդ իսկ պատճառով այս շրջանում դասի վարման ընթացքում խաղային տեխնոլոգիայի տարրերի, զննական մեթոդների օգնությամբ նախապատրաստում ենք աշակերտների ն այբբենական շրջանին:

Գրաճանաչության ա յբբենական շրջանի դասի պլան

Դասի թեման՝ Հ, հ հնչյուն – տառ

Դասի նպատակը՝, Հ, հ հնչյուն –տառի , գրաֆիկական պատկերների ծանոթացում, ճանաչում,տառերի գրության ուսուցում, կարդալու նախնական կարողության զարգացում:

Դասի խնդիրները՝

- թվարկել հ հնչյունով սկսվող, ավարտվող բառեր
- կարդալ բառաշարքերը, բնագիրը:

Դասին կիրառվող մեթոդները՝ խոսքային՝ զրույցի մեթոդ, քարտային աշխատանք, խմբային աշխատանք, խաղային տեխնոլոգիա:

Օգտագործվող դիտազննական պարագաներ՝Հայաստանի քարտեզը 2. Մեծադիր և փոքրադիր, ձեռագիր և տպագիր տառեր 3. Քարտեր 4. Խաղալիք կենդանիներ:

Դասի ընթացքը. Խթանման փուլ

Նախապատրաստական զրույց:

1. – Ո՞վ է կենդանիներ սիրում:
2. Իսկ ինչպե՞ս են կոչվում այն կենդանիները, որոնք ապրում են մարդկանց հետ կողք կողքի
3. - Ի՞նչ ընտանի կենդանիներ և թռչուններ գիտեք
4. Պատկերված կենդանիներից ո՞րը ի՛նչ ձայն է հանում:

Իմաստի ընկալման փուլ

1. Աշխատանք հ հնչյունը լսելու կարողության ձևավորման ուղղությամբ:
   . – Հովն է խաղում խաղաղ հովտում,

Ոսկե հասկերին մեղմ օրոր ասում,

Անուշ հիրիկն ու շադիր ու լուռ

Հավերի հեքիաթն է լսում գլխիկոր:

- Հ-ով սկսվող ի՞նչ բառեր լսեցիք (հով, հովիտ, հասկ, հիրիկ, հավ, հեքիաթ):

. Զրույց թեմատիկ նկարի շուրջ՝ միաժամանակ բացատրելով անծանոթ բառերը:

Հարցեր. - Ի՞նչ եք տեսնում նկարում (հովիտ):

- Ինչե՞ր են աճում հովտում (հասկ, հիրիկ, հատապտուղ՝ հոն):

- Հովիվն ի՞նչն է հսկում՝ մահակն ուսին (հոտը):

Երեխաների ուշադրությունը կարելի է հրավիրել հոպոպի նկարի վրա:

Աշխուժացնող վարժություն «Թռչկոտում ենք հոպոպի պես»:

Աշխատանք մեկնաբառի շուրջ: «Հոպոպ» մեկնաբառը ենթարկել վանկահնչյունային վերլուծության:

Ո՞ր հնչյունի տառն է մեզ անծանոթ (h): 6. Հ, h տառերի ցուցադրում: - Տեսեք՝ի՛նչ տեսք ունեն h փոքրատառն ու Հ մեծատառը (Ցույց տալ, Հ տպագիր նկարազարդ տառերը):

Ասե՛ք h-ով սկսվող բառեր:

Աշխատանք այբբենարանով: Բառաշարքերի և բնագրի ընթերցում: 8. Տառի գրուսուցում:

Տառապատկերների «ստացում» տարբեր նյութերով (թել, մետաղալար, ծեփոն, հատիկներ և այլն), գրություն սեղանին, օդում, մեծ և անհատական գրատախտակներին և այլն:

Աշխուժացնող վարժություն: Խաղ «Հասկերը»: Խաղի նպատակը: Սովորողների աշխարհայացքի ընդլայնում, բառապաշարի հարստացում, հոգնածության թոթափում: Անհրաժեշտ պարագաներ՝հասկ, հասկի նկար կամ տեսաֆիլմ, երաժշտություն:

Կշռադատման փուլ

Կատարել քարտային աշխատանք

Աշխատանք խմբերում: Դասարանը բաժանել 4 – 5 խմբերի: Յուրաքանչյուր խմբի տալ 1 քարտ: Երեխաները աշխատում են քարտերով, կատարում փոխստուգում, անհրաժեշտության դեպքում իրականացնում նաև փոխուսուցում:

Դիտարկում:Յուրաքանչյուր տառի ուսուցման ժամանակ կիրառվում է մեծադիր տառեր, դրանք ավելի ակնառու են և աշակերտները կարողանում են հեշտությամբ ձեռագիր, տպագիր տարբերակները համեմատել: Դասին կիրառվող խաղերը ուսումնական են, դիդակտիկ, աշակերտների հոգնածության թոթափելու միջոց լինելուց զատ դրանք ուսուցանողական են: Այս դասապլանում օգտագործված է քարտային աշխատանք, որն իր բնույթով նորարարություն է և շատ արդյունավետ:

Հետայբբենական շրջան

Դասի պլան

Դասարան՝առաջին

Առարկա՝մայրենի լեզու

Դասի լայն թեմա՝<<Հայերենի կախարդական աշխարհը>>

Դասի նեղ թ եմա՝<<Իմ դասագիրքը>>:

Դասի տեսակը՝նոր նյութի հաղորդման:

Ուսումնառության ակնկալվող արդյունքները՝ըստ չափորոշչային մակարդակների

1-ին մակարդակ

- Կհասկանան կարդացած ստեղծագործության բովանդակությունը:
- Կկրկնեն տառ-բառ- գծապատկեր շղթայի բովանդակությունը:

2-րդ մակարդակ

- Կհասկանան կարդացածի վերաբերյալ առաջադրված հարցերը:
- Կկառուցեն բանավոր խոսք:

3-րդ մակարդակ

- Կհասկանան տեքստի բովանդակության, նկարագրման, և սեփական կենսափորձի միջև կապերը:

Դասին կիրառվող մեթոդները՝ խմբային աշխատանք:

Կազմակերպական պահ

Խթանման փուլ

- ✓ Հանելուկ

Ճիշտ է՝

Խոսել նա չգիտի,

Բայց քո լեզվով

Քեզ հետ խոսում,

Շատ բաներ է

Նա քեզ ասում՝

Տաանը լինես,

Թե դպրոցում: (Դասագիրք)

- ✓ Աշխատանք նկարագրման շուրջ, կապ վերնագրի հետ
    1. Ի՞նչ վայր է պատկրված նկարում:
    2. Ինչի՞ց է երևում, որ դասարան է:
    3. Ինչպե՞ս է զարդարված դասարանը:
    4. Ի՞նչ են անում երեխաները, իսկ ուսուցի՞չը:
    5. Ինչու՞ է այդպես վերնագրված նկարը:

Իմաստավորման փուլ

- ✓ Բանաստեղծության լուռ ընթերցում:
- ✓ Բանաստեղծության բարձրաձայն ընթեցում՝ մեկնաբանելով, շարունակելով:

1-ին քառատող

1. Ի՞նչ է նշանակում <<ձեռքս առած>> արտահայտությունը:
2. Դրա փոխարեն ի՞նչ այլ բառ կարող էր գործածել հեղինակը:

3. Դրանից կփոխվեր արդյոք բանաստեղծության միտքը:

2-րդ քառատող

1. Ի՞նչ եք հասկանում <<գույներով պես-պես>> ասելով:

3-րդ քառատող

1. Ի՞նչ կապ կա հայրենիքի և դասագրքի միջև:

✓ Բառային աշխատանք

1. Ի՞նչ անծանոթ բառի եք հանդիպել: Ընդգծե՛ք:

✓ Անգիր սովորելու նախապատրաստում

✓ Մտքում կարդալ այն քառատողը, որը ձեզ դուր է գալիս: Ով գեղեցիկ, արտահայտիչ և սահուն կկարդա, կստանա <<Աստղիկ>>:

Կշռադատման փուլ

Խմբային աշխատանք

1-ին խումբ՝ վարժություն 1-ը,

2-րդ խումբը՝ վարժություն 1-ը,

3-րդ խումբը՝ վարժություն 4-ը:

Դիտարկում: Այս դասապլանից պարզ է դառնում, որ զննական պարագաները հետզհետե քչանում են, պատճառն այն է, որ այս շրջանում շատ կարևոր է աշխատել աշակերտների բանավոր խոսքը հղկելու , բառապաշարը հարստացնելու վրա: Թեև դա չի խանգարում, որ աշակերտները նկարներ, նկարազարդումներ վերլուծեն, դիտեն մուլտֆիլմեր կամ այլ տեսանյութեր:

Եզրակացություն

Ժամանակակից դպրոցը, ինչպես երբևէ, ապրում է լուրջ հեղաշրջում: Դպրոցական բարեփոխումները անդրադարձան նաև տարրական դասարաններում ուսումնադաստիարակչական գործընթացի և ուսուցչի գործունեության կատարելագործմանը:Ժամանակակից դասը արդյունավետ դարձնելու համար ուսուցիչը պետք է ծանոթ լինի մանկավարժական գիտության նորագույն նվաճումներին և առաջավոր ուսուցիչների ուսանելի փորձին:Դեռևս ՅանԱմոսԿոմենսկին նշում էր, որ կարելի է և անհրաժեշտ ուսուցչին սովորեցնել կիրառել մանկավարժական գործիքակազմը: Իոհան Պեստալլոցին կարևորում էր կրթության «մեխանիզմի» ստեղծումը, որի վրա հենվելով յուրաքանչյուր ուսուցիչ կարողէրկառուցել իր մանկավարժական գործունեությունը: Կատարելով այս աշխատանքը՝ սկսեցի ավելի շատ կարևորել դիտազննական պարագաների կիրառումը : Հասկացա, որ դիդակտիկ նյութերի օգտագործումը անհրաժեշտ է բոլոր դասարաններում և բոլոր դասաժամերին, բայց հատկապես մեծ է նրա կիրառումը տարրական դասարաններում: Կարևորեցի նաև ուսուցչի խոսքը (դիմախաղերը, ժեստերը, արտասանական երանգավորումը), որը խոսքի զննականությունն է. այն ձևավորում է ձեռք բերած գիտելիքները համարժեք խոսքով ներկայացնելու երեխաների կարողությունը: Բայց հարկ է նշել նաև, որ ուսուցման մեթոդները կախված սոցիալական պատվերից, կրթության նպատակներից փոփոխվում են: Ուսումնասիրությունները փաստում են, որ առաջարկվող ոչ մի մեթոդ ունի վեսալ չէ և բացարձականացնել դրա դերը և նշանակությունը անիմաստ է: Ոսուցման մեթոդները արդյունավետ են համալիր կիրառման, ուսուցման նպատակի, խնդիրների և ակնկալվող արդյունքների ճիշտ ընտրված հարաբերակցության դեպքում

Օգտագործված գրականության ցանկ

1. Բաբանսկի Յու. Կ., Մանկավարժություն, Հատոր 1-ին, Ե., Լույս, 1986:
2. Ամիրջանյան Յու., Ա. Սահակյան, Մանկավարժություն, մանկավարժ, 2005
3. Ջուլիետա Գյուլամիրյան, Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2015:
4. Տեր-Գրիգորյան Ա. Ե., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, Լույս, 1980:
5. Համացանցային ռեսուրս, начальная школа, n-shkola.ru